



Երիտասարդության ոլորտում գործող ԹՀԿ-ների



Եվրասիա համագործակցություն հիմնադրամը շնորհակալություն է հայտնում մայիսի 7-ից 8-ը տեղի ունեցած դասընթացին մասնակցելու համար: Խնդրում ենք 20 րոպե ժամանակ հատկացնել գնահատման հարցաթերթիկը լրացնելու համար:

1 Համընկա՞ն արդյոք դասընթացից ձեր սպասելիքները արդյունքների հետ:



Ավելին էր, քան սպասում էի: Ուղղակի հիացած եմ:

2 Ստացաք արդյո՞ք բավարար գիտելիքներ կամ գործիքներ, որոնք կօգնեն ծրագիրը արդյունավետ իրականացնելու համար:



Շատ լավն էր ծրագիր գրելու զսպանակի նմանեցումը, դա բավականին օգտակար գործիք է:

Շատ արդյունավետ եմ համարում Հարթի աստիճանակարգի իմացությունը և թիրախային կիրառումը, ինչպես նաև ՍԶ-ի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը

Ես ստացա ընդհանուր տեղեկատվություն ֆոնդիայթայթման, ձեռնարկատիրության և երիտասարդական քաղաքականության ոլորտում իրարականցվող ծրագրերի մասին: Դասընթացը տվեց համառոտ տեղեկատվություն այս բնագավառների վերաբերյալ: Հաջորդիվ կցանկանայի ավելի մանրամասն ունենալ գիտելիքներ սոցիալական ձեռներեցության վերաբերյալ:



Ինձ համար ավելի հստակ դարձավ, թե ինչ է իրենից ենթադրում երիտասարդական քաղաքականությունը, եւ ինչ իդիկատորներ գոյություն ունեն՝ գնահատելու քաղականությունը:

Երիտասարդական մասնակցության օրինակները և կազմված ուղեցույցը

Լավ կլիներ, որ գործնական աշխատանքները թրեյներների ղեկավարությամբ շատ լիներ:

Գործիքները որոնք ներկայացվեցին, բավականին օգտակար էին, օրինակ Գայանեի կողմից ներկայացված խնդիրների վերհանման մեթոդը:

3 Արդյո՞ք դասընթացին ներկայացված թեմաները՝



Երբ ծրագիր ես ներկայացնում կամ մշակում, ապա պետք է բավականին խորը վերծրության ենթարկես քո թիրախին՝ հասկանալու վերջինիս հուզող իրական կարիքները:

Ինձ համար նոր տեղեկատվություն էր երիտասարդների խնդիրների շուրջ կատարած հետազոտությունները:

Ոլորտի խնդիրները վերլուծելու փուլերը՝ ներանձնային, միջանձնային, համայնքային եւ գլոբալ, ինձ համար նոր մոտեցում էր, նաեւ կիրառելի:

Խնդիրների վերհանումը

Սոցիալական ձեռնարկատիրությունը

Խնդիրների դասակարգումը չորս մակարդակներում, երիտասարդության քաղաքականության պատմությունը,

Նոր էին վերջին խոսակցի կողմից ներկայացվող ֆինանսավորման աղբյուրները, որոնք կիրառելի կլինեն:

4 Հետևյալ թեմաներից որո՞նք են եղել առավել շատ օգտակար: Խնդրում ենք գնահատել բոլոր թեմաները 1-5 սանդղակով (որտեղ 1-ը՝ ամենաքիչ օգտակարն է, իսկ 5-ը՝ ամենաշատ)

Երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում իրականացված հետազոտությունների արդյունքների, կարևոր դուրսբերումների և այլ տվյալների ներկայացում

Երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում իրականացված հետազոտությունների արդյունքների, կարևոր դուրսբերումների և այլ տվյալների ներկայացում



Երիտասարդության քաղաքացիական մասնակցության ձևերն ու մեխանիզմները



Համամարդկային հիմնարար արժեքների դերը երիտասարդական աշխատանքներում



Երիտասարդությունը և ՀՀ միջազգային պարտավորությունները



ՀՀ-ում իրականացվող պետական երիտասարդական քաղաքականությունը



Ձեռնարկատիրական գործունեությունը իբրև երիտասարդական ՀԿ-ների մասնակցայնության ձև





Երիտասարդական խնդիրների քննարկում հիմնված հիմնախնդիրների՝ ներանձնային, միջանձնային, գլոբալ մակարդակներում դրանց դրսևորման ուղղությամբ



Դոնորների ռազմավարական քարտեզագրում



5 Ձևավորվեցի՞ն արդյոք կապեր, որոնք կարող են օգտագործել հետագայում՝ նոր ծրագրերի մշակման, նոր գաղափարների իրականացման նպատակով և այլն:



Ճանութացա նոր դեմքերի հետ ում հետ միգուցե լավ բաների շուրջ համագործակցենք

Գյուժրու ՀԿ-ների հետ ծանոթություն եղավ և հնարավորության դեպքում պատրաստվում ենք համատեղ ծրագրով հանդես գալ:


Օրինակ Դիլիջանի համայնքային կենտրոնի հետ հստակ ձեռք բերեցինք պայմանավորվածություն կազմակերպել հանդիպում կամ ուսուցողական այց իրենց և մեր երիտասարդների միջև: Եվրագիայի աշխատակիցների հետ զրույցի ժամանակ նոր ծրագրի գաղափար ծնվեց մշակութային և տեղեկատվական այց կազմակերպել մեր երեխաների համար, ՀՀ տարբեր քաղաքներում:

Գյուժրի քաղաքի որոշ կազմակերպությունների հետ կհամագործակցենք մեր երիտասարդական ծրագրերից մեկի շրջանակում:

Մարզային ՀԿ-ի հետ կիրականացնենք ծրագիր

ՄԻՏԶ ՀԿ ներկայացուցիչ ԼԼՈՆԻ հետ հնարավոր է իրականացնենք համատեղ ծրագրեր:

6 Ինչպե՞ս եք պատրաստվում տարածել ինֆորմացիան այս միջոցառման մասին ձեր մասնագիտական շրջանակում:



47% (8)
Բանավոր կասեմ

47% (8)
Սոցիալական մեդիայում
կատարեմ լուսանկար
կղևեմ


76% (13)
Կառաջարկեմ իմ
մասնագիտական
շրջանների
անդամներին հետևել
ԵՀՀ Ի և ՀԲԸՄ Ի
միջոցառումներին
մասնակցել

6% (1)
այլ

17
Responses

ՀԿ-ի կայքում արդեն գրառում է արված՝ նկարագրությամբ ու նկարներով

7 Պատրաստվում ե՞ք արդյոք կիսվել ստացված գիտելիքներով, գործիքներով ձեր գործընկերների հետ:



արդեն կիսվել եմ իմ գործընկերների հետ, թեյի սեղանի շուրջ կիսվելով իմ երկօրյա դասընթացի փորձառությամբ

Արդեն իմ մասնագիտական շրջանակում կիսվել եմ

Արդեն կիսվում եմ: Շուտով՝ մոտակա օրերին, մենք պատրաստվում ենք հավաքագրել ծրագրերի մշակման նոր թիմ և ստացված գիտելիքներով և տեղեկատվությամբ մշակել նոր ծրագրեր:

Բանավոր արդեն փոխանցել եմ ստացած տեղեկատվությունը: Հաջորդիվ փոխանցելու եմ ստացած նյութերը:

Արդեն իսկ կիսվել եմ: Բացի ներկայացնելուց նոր ստացած տեղեկությունը, նաեւ օգտվել ենք ՀԿ Դեպոյի կայքում գտնվող «Չարգացման Գործիք»-ից եւ վերուձել մեր կազմակերպության ներկայիս վիճակը: Հույս ունենք, կգտնենք փորձագետներ եւ կլրացնենք բացահայտած խնդիրները:

Արդեն իսկ սեմինար եմ անցկացրել մեր երիտասարդական դեպարտամենտի հետ

Նրանց տեղեկացնում եմ այն արժեքավոր տեղեկությունների, գիտելիքների մասին , որոնք ձեռք եմ բերել դասընթացի օրերին:

Պատրաստվում եմ պատրաստել ներկայացում և ներկայացնել բոլոր նոր գործիքները:

8 Միջոցառման ո՞ր պահին էր որ առանձնակի հիշվեց:

Սոցիալական ձեռնարկությունների վերաբերյալ տեղեկատվությունը

Երիտասարդների մասնակցության խթանման ու երիտ քաղաքականության ու ֆոնդիայթիայթման

Երիտասարդական ծրագրեր, հնարավորություններ

Արեգ Թադևոսյանի թեման

Երիտասարդների վերաբերյալ հետազոտության արդյունքները:

Մարդկային հիմնարար արժեքների վերաբերյալ քննարկումը

Արեգի աստիճանը

Ինձ համար սեմինարի ամբողջ ընթացքը հետաքրքիր և ուսուցողական էր, չեմ կարող առանձնացնել:

Առանձնակի ցանկանում եմ նշել կազմակերպիչների կողմից ստեղծած ոչ լարված, բնական աշխատանքային մթնոլորտը, երբ ամեն ինչ արվում էր, որ որեւէ գործողություն չլինի անտեղի, երբ բոլոր աշխատանքները վերլուծվում էր շատ ավելի խորքային մակարդակով: Շնորհակալություն Գայանեին եւ Փիրուզային:

Հիմնականում բոլորը պահերը պիտանի էին, բայց հագեցած լինելու պատճառով առանձնացնել չի ստացվում

Խմբային աշխատանքները

Խմբային աշխատանքները

Չեմ կարող ասել, քանի որ բոլոր թեմաներն էլ, դասընթացավարների աշխատանքն էլ շատ տպավորիչ էին:

Ճանութություն

Իզաբելլայի հետ քննարկումը)

Դոնորների ռազմավարական քարտեզագրում

Իզաբելա Սարգսյանի ներկայացրած թեման

9 Ելք 1-2 ուսուցման կարիքներ/բացեր, որ դուք կամ ձեր կազմակերպությունը ունի:

Ինչպես գոյատևել մրցակցային ՀԿ դաշտում

Տեսանելիության ապահովման գործիքակազմի ընդլայնում, storytelling, PR, ֆոնդհայթայթման մեխանիզմներ, Հրանտ Դինքի ու Համայնքային զարգացման ծրագրերը ու էդ ծրագրերը մասնակիցների գործունեությունների հետ միասին մեկ հետաքրքիր show ֆորմատով հարցազրույցների տեսքով ներկայացնելը և այլն

Թիմի, զարգացման վերապատրաստումներ

Ֆոնդհայթայթման եւ ֆինանսական միջոցների կառավարման կարիք

գրագետ/անկաշկանդ/շահավետ բանակցություններ վարելու հմտություններ

Սոցիալական ձեռներեցության միջոցով զբաղվածության խթանում

Ֆոնդհայթայթման վերաբերյալ

Ֆոնդհայթայթման և սոցիալական ձեռներեցության հմտությունների կարիք:

1. Ճիշտ ռազմավարական պլան գրելու հմտությունների բացակայություն, 2. Ֆոնդհայթայթման հմտությունների բացակայություն, 3. անձնային մակարդակով՝ lack of networking skills, lack of public speaking skills, 4. վերլուծական մտածողությունը նույնպես շատ կցանկանամ զարգացնել

Ծրագրեր գրելու կարողությունների զարգացում, փաստաթղթավարություն

-

Ռազմավարական պլանավորում և գործողությունների պլանի կազմում

Խմբային աշխատանքը քիչ էր, որի պատճառը հավանաբար ժամանակի սղությունն էր:

Ցանկանում ենք ունենալ պրոեկտորներ

Դրամաշնորհներ գրելու, պատրաստելու գիտելիքներ:

Ֆոնդհայթայթման վերաբերյալ դասընթացներ

Հանրային կապեր և քարոզչություն

10 Խնդրում ենք նշել ցանկացած նկատառում կամ կարծիք այս դասընթացի մասին, որը վերը չի քննարկվել և կօգնի նմանատիպ դասընթացները հետագայում է՛լ ավելի արդյունավետ դարձնել:

Ամեն ինչ լավ էր, միայն տևողությունն էր երկար ու ակամայից լավ ու հետաքրքիր կյանքը չի ստացվում 100%-ով վերցնել:

Լինել ավելի սպեցիֆիկ ու փորձել առավելապես թեմայի մեջ մնալ դասընթացի ժամանակ, անհարկի ու հարկի չընդհատել դասընթացավարին ու թե դասընթացավարը, թե երբեմն կազմակերպչական կողմը վերահսկեն, որ լինի դիսկուրս այլ ոչ դիալոգ 2 անհատի կամ մասնակից ու դասընթացավարի միջև: Ընդհանուր գոհ եմ ես կարճ ժամանակում փոխանցվածի համար: Շնորհակալություն: Լավ մնացեք:

Ամեն ինչ շատ լավ էր կազմակերպված

Ինչպե՞ս գրել դրամաշնորհային ծրագիր թեման ինձ համար առաջնային Է այս փուլում նաեւ ինչպես բյուջե կազմել եւ կառավարել

լավ կլինի, եթե դասընթացները մեկից ավել օր են տևելու, ապա նախընտրելի է այդ օրերը ամբողջությամբ մի վայրում լինի, կամ մոտակայքում, խոսքս վերաբերվում է գիշերակացին:

Ցանկալի կլիներ ավելի շատ ժամանակ հատկացնել գործնական վարժություններին և հմտությունների ձևավորմանը: Բայց և այնպես շնորհակալություն հետաքրքիր 2 օրերի համար:

Հետագայում ավելի երկար լինեն դասընթացները, որպեսզի առավել հանգամանորեն անդրադարձ կատարվի թեմաներից յուրաքանչյուրին: Շնորհակալություն ♥

Ինֆորմացիան շատ էր և լրիվ չէր տեղավորվում ժամանակի մեջ, Օրինակ մարդու իրավունքների ներկայացումը շատ քիչ էր, հիմնականում անհրաժեշտ էր ժամանակ հարց ու պատասխանի համար: Կարելի է ավելացնել Համայնքի մտածողության և արժեհամակարգի տարբերությունները և դրանց դժվարությունները համայնքի զարգացման գործում: Շատ շնորհակալություն, կոնկրետ ինձ համար դասընթացը լրիվ համապատասխանում էր իմ սպասելիքներին և մեր կազմակերպության կարիքներին:

Շատ կցանկանայի, որ սոցիալական ձեռներեցության թեմայով քննարկումը հասցնեինք ավարտին: Մենք արեցինք թիմային աշխատանք՝ կիսատ թողնելով դասընթացավարի ներկայացումը: Վերջինս ինձ համար ավելի արժեքավոր էր, քան թիմերով արված աշխատանքի արդյունքը: Նաեւ, գտնում եմ, որ յուրաքանչյուր թեմային, եթե տրամադրեինք ավելի երկար ժամանակ, ստացված արդյունքը, գիտելիքները կլինեին ավելի խորքային եւ մնայուն: Շնորհակալություն տրված հնարավորության համար:

Մի քանի ՀԿ-ների կարծիք. սպասվում էր հարթակ, կոալիցիա, ցանց ստեղծվելու հարցի քննարկում, ձևաչափի մշակում: Հիմնականում, խմբային աշխատանքներն են տալիս հնարավորություն աշխատելու, միմյանց հիշելու, գաղափարներ փոխանակելու,

Ամեն ինչ հրաշալի էր , մեծ սիրով ևս մեկ անգամ կմասնակցեմ: Շնորհակալ եմ :

Կառաջարկելի ավելացնել պրակտիկ աշխատանքներին հատկացված ժամանակահատվածը:

Շատ լավ էր ամեն ինչ կազմակերպած, սակայն կյուբի ծավալը մեծ էր, կարելի էր 3 օրվա ընթացքում մատուցել այդքան ինֆորմացիան:

Դասընթացներ պետք են կազմակերպել պարբերաբար և նաեւ մարզերում

Նկատառում անկեղծ ասում եմ չունեմ

Առաջարկում եմ օրերը շատ լինեն

